ծանքով էր յիշում այդ փառքը: Աշակերտները նրան կոչում էին «դպրոցի շուն», այն պատճառով, որ ամէն օր, ճաշից յետոյ, իւրաքանչիւր աշակերտի սեղանից աւելցած փշրանքը Խալֆա-Թաթոսի կերակուրն էր: Բայց այնքան բազմաթիւ աշակերտներից աւելացած պաշարը դարձեալ չէր բաւականանում կշտացնելու շատակեր Խալֆայի անյագ որկորը, որ պատմական Շարայի հետ կարող էր ազատ մրցութիւն անել: Նա, բացի դրանից, ստանում էր կաշառքներ խեղճ աշակերտներից, որոնք ծածուկ տալիս էին նրան մի ամբողջ լաւաշ, որ չծեծէր, կամ իզուր չպատժէր նրանց:

Խալֆա-Թաթոսը կոչւում էր «դպրոցի շուն» առաւել այն պատճառով, որ ամէնին կծում էր, ամէնի վրայ հաչում էր, աշակերտները հանգստութիւն չունէին այդ բարբարոսի ձեռքից: Կարօն սաստիկ ատում էր նրան. օր չէր անցնում, որ մի խայտառակութիւն չսարքէր նրա գլխին: Տեսնում ես, հանգստի ժամանակ նա ման է գալիս դպրոցի բակումը կարգ պահպանելու համար. աշակերտները երկիւղածութեամբ նայում էին նրա վրայ. Կարօն դեւի նման ծածուկ մօտենում է, քարշ է տալիս Խալֆայի ետեւից մի աղուէսի պոչ: Նա ոչինչ չէ նկատում, շարունակում է ման գալ եւ աշակերտներին սպառնալ, որ հանգիստ լինեն, մինչդեռ աշակերտների մէջ տիրում է ընդհանուր ծիծաղ եւ հռհռոց...

Մի անգամ կէսօրից յետոյ վարժապետը գնացել էր քնելու. այդ ժամանակ, ամենաւուր սովորութեան համեմատ, մեզ հաւաքում էին եւ ածում դասատան մէջ, որ լուռ մնանք, շարժում չգործենք, որպէսզի վարժապետի քունը չխանգարող. որովհետեւ նրա սենեակը կից էր մեր դասատանը: Մենք քարէ արձանների նման նստած էինք: Խալֆան երկար ճիպոտը ձեռին, փառաւոր կերպով անցուդարձ էր անում դասատան մէջ, որպէս սուլթանն իր պալատում: Տիրում էր գերեզմանական լռութիւն. ճանճի թռչելն անգամ լսելի էր լինում: Կարօն նայեց նրա վրայ, եւ իմ կողքին խթելով, ասաց.

— Տես Ֆարհատ, այդ աւանակի ականջները եթէ կտրես, մի ջուխտ լաւ տրեխ դուրս կը գայ:

Վերակացուն, ի հարկէ, ոչինչ չլսեց, միայն Կարօյի սրախօսութիւնը Խալֆա-Թաթոսի ահագին ականջների մասին այնքան ճիշտ էր, որ ես չկարողացայ իմ ծիծաղը զսպել, որով դարձրի իմ վրայ ամբողջ դասատան ուշադրութիւնը:

— Չոքի՛ր, — գոռաց խալֆան, ցոյց տալով անկիւնը:

Ես պատրաստեցայ կատարել հրամանը:

— Դու չե՛ս չոքի, Ֆարհատ, — ասաց Կարօն: